Մինչև 6—7 տարեկան հասակը տղա թե աղջիկ ազատ վազվզում, խաղում էին, անցկացնելով օրվա մեծ մասը դուրսը և տուն ներս վազելով, հաց ու պանիր կամ մի այլ ուտելու բան վերցնելու և իսկույն տանից դուրս փախչելու համար։ Աղջիկներն ավելի վաղ էին սկսում մասնակցել տնային աշխատանքներին՝ իրենց կրտսեր եղբորը կամ քրոջն էին օրորում, թեթև ամանով աղբյուրից ջուր բերում, տունն ավլում։ Մինչև 12 տարեկան հասակը նա արդեն սովորած էր լինում մոր, տան մեծ հարսի կամ ավագ քրոջ ղեկավարությամբ գուլպա, գորգ ու կարպետ գործել, տնային աշխատանքների որոշ կարգ ու կանոնին հետևել, մեծերին և հյուրերին սպասավորել, այն ամենը, ինչ որ նրան պետք պիտի գար ապագայում ուրիշի տուն որպես հարս անցնելու ժամանակ, ինչպես և սովորած էր լինում փոքր երեխաներին խնամել, քանի որ մինչ այդ արդեն մայրական տանը նրան էր հանձնվում տան փոքրիկներին օրորելը, խոտած ման ածելը, երեսները լվանալը, կերակրելը, քնացնելը և այլն։ Տղաներն էլ այդ միջոցին արդեն ընտելացած էին լինում գառնարածության, տավարածության, մեծերին օգնելու վարի, հնձի, կալսելու ժամանակ։ 12—13 տարեկան տղան արդեն դառնում էր ընտանիքի կրտսեր աշխատավոր անդամը։

Բայց մինչև երեխաների այս հասակին հասնելը, մանավանդ նրանց դեռ ծծկերության ժամանակ և առաջին տարիները, հայրն ու մայրը կարծես ամօր էին համարում ցույց տալ, թե իրենք նրանց ծնողներն են։ Մայրը իր պատրօնին՝ սկեսրայրին, նույնիսկ իր հորը տեսնելուն պես երեխային գրկիցը վայր էր դնում, կարծես իրանը չէր։ Պատահել էր, որ կամուրջի վրա[106] հորը կամ պատրօնին պատահելով, մայրը երեխային ձեռքից իջեցրել է, գետնին դրել և մի կողմ կանգնել։ Երեխայի հայրն էլ իր հոր տուն մտնելը տեսնելուն պես դադարում էր իր երեխային ծնկան վրա նստեցրած խաղացնել և անմիջապես իջեցնում էր նրան կարծես թե իրանը չէր։ Այսինքն, թե՛ կինը և թե՛ տղամարդը ամօր էին համարում և խույս էին տալիս ցույց տալու, թե իրենք ունեցել են սեռական մերձեցում, որի հետևանքն ու կոնկրետ ապացույցն է ծնված երեխան։ Այդ ամօրը բխում էր անկասկած նույն նախնական հասկացողությունից, որով մեղք էր համարվում սեռական մերձեցումը և նորապսակներն առաջստից հետո որպես մեղք գործածներ քառասուն օր նկատվում էին պղծված հանցագործներ։ Այդ նույն մտայնությամբ պիտի բացատրել, որ որսորդը որսի գնալուց առաջ, քահանան պատարագ կատարելուց առաջ նախորդ գիշերը պիտի հրաժարված լինեին սեռական մերձեցումից։

Նույն մտայնության հետքերն են պահպանվել այն բանի մեջ, որ տղամարդը իր կնոջը, կինը իր ամուսնուն ուրիշի ներկայությամբ խոսելիս չէր կոչում «իմ կինը» կամ «իմ մարթը»։ Տղամարդը իր կնոջ մասին ասում էր՝ «մէր հարսը», «Թումիի աղջիկը», «Գիքիի քուրը», իսկ աներոջը դիմելիս՝ «ախչիկըտ», կնոջն էլ դիմելիս՝ մանավանդ ուրիշների ներկայությամբ՝ «Ա՜յ, Թումիի ախչիկ», «ա՜յ, կնիկ»։

Կինն էլ ամուսնու մասին խոսելիս չէր ասում «մարթըս» կամ նրան դիմելիս անունը տալիս, այլ սկեսրոջը դիմելիս ասում էր՝ «տղէտ», տալոջը՝ «ախպէրըտ», տեգեր կնոջը՝ «տէգրըտ», իր ծնողներին՝ «փէսէտ», ուրիշներին՝

106 Գորիս գյուղի և Գորիս քաղաքի միջև։